

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ՄՈՌԱՅՈՒԱԾ ՏԱՊԱՆԱԲԱՐԸ

Տապանաքարերը հապարաոր տարիների պատմություն ունեն։ Դրանց ձեռք էր ոճը ընդհանրապես պայմանավորված են եղել ժամանակի հասարակական, ազգային և կրոնական պահանջներով։

Տապանագրերում հիմնականում գրում է հանգուցեալի անունը, ծննդեան և մահուան տարեթուերը, երբեմն նաեւ մահուան պատճառը։ Հայաստանում քրիստոնէութեան մուտքից յետոյ տապանաքարերը վարդարուել են նաեւ իսաչաքանդակներով և քրիստոնէական տարբեր մոտիւներով։

Հանգուցեալը, որի տապանաքարը մոռացուել էր և ով առիթ հանդիսացաւ այս գրութեանս Կ. Պոլսոյ երանաշնորհ պատրիարք Տ. Զաւէն Արքեպս. Տէր Եղիայեանն է։ Տէր Եղիայեանը պատրիարքական պաշտօնը զբաղեցրել է 1913-1916, 1919-1922 ժամանակահատուածներում։ Նա յայտնի է նաեւ Վշտակիր Պատրիարք անուամբ։ Յիրաի Վշտակիր, քանի որ ականատես է եղել 1915 թուականի Հայոց Մեծ Եղեռնի արհաւիրքին։

Ուսումնասիրելով յետեղեռնեան պատմութիւնը, Զաւէն Տէր Եղիայեան Պատրիարքի կենսագրութիւնը և հոգեւոր գործունէութիւնը՝ պարզում է, որ 1916 թուականին թուրքական կառավարութեան որոշմամբ Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը լուծարում է և, միանալով Սսի, Աղթամարի կաթողիկոսութիւններին և Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանը, կազմում են մէկ հոգեւոր հաստատութիւն, Կիլիկիոյ կաթողիկոսութիւն անուան տակ։ Կաթողիկոսութեան նստավայրը դառնում է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանքը, իսկ հոգեւոր պետը Մահակ Կաթողիկոս-Պատրիարքը։ Այս որոշմանը հետեւում է Զաւէն Պատրիարքի արքայրը իր ծննդավայր Մուսուլ։ Թուրքերը, հայերին ֆիլիկապէս ոչնչացնելուց յետոյ, ծրագրել էին վերացնել նաեւ հայերի հոգեւոր կառոյցներն ու արժէքները։

1918-ի սկզբին Սուլթան Ռէշիդին յաջորդում է Սուլթան Մուհամէդ Վահիդէդին, ով շարունակում է պայքարել Երիտթուրքերի դէմ։ Նա պաշտօնանկ է յայտարարում Էնվեր փաշային բանակի ընդհանուր հրամանատարի պաշտօնից և ներում շնորհում բոլոր քաղբանտարկեալներին՝ այդ թում նաեւ Զաւէն Պատրիարքին։

Նոյն թուականի Հոկտեմբերի 30-ին Մուղրոսում կնքուած փնադադարով աւարտում է առաջին աշխարհամարտը։ Զինադադարից յետոյ Կ. Պոլսոյ Ազգային իշխանութիւններին յաջողում է վերականգնել Ազգային Մահմանադրութիւնը և Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը անջատել Կիլիկիոյ կաթողիկոսութիւնից։ Նրանք դիմում են նաեւ Սուլթանին և Բրիտանական Կօմիսարին՝ Զաւէն Պատրիարքի պաշտօնը վերականգնելու խնդրանքով։ Խնդրանքը բաւարարում է, և 1919 թուականի փետրուարին Զաւէն Պատրիարքը վերադառնում է Կ. Պոլիս։ Հասնելով Կ. Պոլիս՝ նա կրկին ստանձնում է իր արքայրով թափուր մնացած պատրիարքական պաշտօնը և անմիջապէս լծում եղեռնացած հայ ժողովրդի մնացորդացի՝ տարագիր և որբ հայերի փրկութեան գործին։

1920 թուականի սկզբին Կիլիկիայում քննական պորբերը և թուրք-քրդական խաժամուժը յարձակում են հայերի վրայ։ Հայերը դիմում են ինքնապաշտպանութեան։ Յարձակման յաջորդ օրերին ֆրանսական պորբերը

հեռանում են, որի պատճառով հայերի ինքնապաշտպանությունը թուլանում է եւ լինում են բազմաթիւ հայերի նոր կոտորածներ: Կոտորածները դադարեցնելու եւ Կիլիկիայում հայերի անվտանգությունը ապահովելու խնդրով, գրեթէ միաժամանակ Փարիզ են մեկնում Սահակ Բ. Խապատեան Կաթողիկոսը եւ Զաւէն Պատրիարքը: Կաթողիկոսը հանդիպում է Ֆրանսիայի վարչապետին եւ Արտաքին Գործոց նախարարին եւ ներկայացնում իր խնդրանքը: Ֆրանսիան հրաժարում է օգնել Կիլիկիայի հայերին: Երուսաղից յոյսը կորած 1920-ի մայիսին Զաւէն Պատրիարքը վերադառնում է Կ. Պոլիս եւ հետագայ ամիսներին ականատես լինում Կիլիկիայի հայաթափմանը:

1922 թուական: Ճակատագրական տարի Զաւէն Պատրիարքի համար: Մէկ կողմից Անտանտի պորքերը հեռացան Թուրքիայից, միւս կողմից յոյները ճակատագրական պարտություն կրեցին Զմիռնիայում ու Փոքր Ասիայի արեւմտեան ափում, որից օգտուելով՝ Մուստաֆա Բէնալը Թուրքիան հռչակեց հանրապետություն:

Թուրքական նոր իշխանութեան աչքին Զաւէն պատրիարքը Թուրքիայի համար անցանկալի անձնատուրութեան համարում ունէր: Նրանք երբէք չհանդուրժեցին Պատրիարքի այցը Ֆրանսիա եւ այն համարուեց իբր Թուրքիայի դէմ ուղղուած դաւաճանություն: 1922 թուականին Զաւէն Պատրիարքը երկրորդ անգամ է արքայութեան Մուսուլ, ուր ապրում է իր կեանքի մնացած տարիները եւ 1947-ին կնքում իր մահկանացուն:

Վշտակիր Պատրիարքի վերջին ցանկությունն էր թաղուել Երուսաղէմում: Եւ նրա կոտակի համաձայն՝ աճիւնը տեղափոխուում է Երուսաղէմ եւ ամփոփում Երուսաղէմի Սբ. Փրկչի գերեզմանատանը: Սակայն, յաջորդ տարի բռնկուած արաբա-իսրայէլեան հակամարտութեան եւ դրան յաջորդած ճգնաժամի պատճառով մոռացութեան եւ անուշադրութեան է մատնւում Սրբապան Հօր գերեզմանը եւ այն մնում է առանց տապանաքարի:

* * *

2005 թուական: Ողջ հայ ժողովուրդը հայրենիքում եւ նրա սահմաններից դուրս ոգեկոչում է Հայոց Յեղաապանութեան 90 ամեակը: Կապմակերպում են բողոքի ցույցեր, սգահանդէսներ, գիտաժողովներ, յուշ-երեկոներ եւ այլն: Մատուցում են սուրբ եւ անմահ պատարագներ, կատարում են հոգեհանգստեան արարողություններ:

Այս կարգին, յիշատակութեան արժանի կարեւոր ձեռնարկ է Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արքեպս. Մանուկեանի բարեհաճ կարգադրությամբ Զաւէն Պատրիարքի մոռացուած տապանաքարի տեղադրումը: Գերեզմանը գրեթէ վաթսուն տարիների մոռացությունից յետոյ ունեցաւ իր արժանի եւ պատրիարքաւայել տապանաքարը, որի վրայ գրուած է.

ԱՍՏ ՀԱՆԳԶԻ
ԶԱԲԷՆ ԱՐԵՇՊՍ. ՏԷՐ ԵՂԱՅԵԱՆ
ՎՇՏԱԿԻՐ ՊԱՏՐԻԱՐԷ Կ. ՊՈԼՍՈՅ
ԾՆԵԱԼ 1868. ՎԱԽՃԱՆԵԱԼ 1947
ՊԱՏՐԻԱՐԷ
1913-1916, 1919-1922

Յեռագրություն.

Ցաւօք, մինչեւ օրս էլ շարունակում է մոռացութեան թանձր խաւար Չաւէն Արքեպս. Տէր Եղիայեան անձի շուրջը: Բչերն են յիշում նրան:

Յոյս ունենք, որ հայ ժողովուրդը կը դրսեւորի հարկ եղած ողջախոհութիւն, եւ կը սրբագրի այս անընդունելի եւ, յիրաւի անարդար մոռացութիւնը եւ Յեղասպանութեան 90 ամեակին, ի յարգանս Չաւէն Պատրիարքի նրա անունով կ'անունակոչուի, ասենք, Երեւանի կենտրոնական փողոցներից մէկը կամ որեւէ կրթօճախ, ինչպէս նաեւ նրա գերեզմանաթմբից հող կը տեղափոխի Ծիծեռնակաբերդի յուշահամալիր:

Սա էի ուզում ասել, կամ գրովս մէկ անգամ եւս հաւաստել, որ մենք թերանում ենք մեր ազգի երախտաւորներին արժանի յարգանքը մատուցել: Աւելին, երբեմն ինձ թւում է, թէ օտարները այդ գործում գերապանցում են մեզ. նկատում են մեր երախտաւորներին եւ նրանց ըստ արժանւոյն գնահատում մեզանից առաջ: Վերը ասուածիս իբր ապացոյց բերեմ մի պարզ օրինակ. Ֆրանց Վերֆելն իր «Մուսա Դաղի քառասուն օրերը» վէպում անդրադարձել է Չաւէն Պատրիարքի կերպարին, մինչ մենք՝ հայերս, նոյնիսկ ատելորդ ենք համարել նրան ներառել «Բրիտոնեայ Հայաստան» հանրագիտարանում, եւ որ ատելի ծիծաղելի է՝ նրա մասին չի գրուել նաեւ «Հայկական Հարց» հանրագիտարանում, այն դէպքում, երբ այդ հանրագիտարանում տեղ գտած Դոկտոր Յո. Լէփսիուսը, Նուպար Փաշան (ովքեր արժանի են այդ պատուին), եւ շատ ուրիշներ հիմնականում համագործակցել են Չաւէն պատրիարքի հետ եւ գրեթէ իրենց բոլոր նախաձեռնութիւններում խորհրդակցել նրա հետ եւ շարժուել նրա ցուցումներով:

Թող այս տողերս իբր քննադատութիւն չնկատուեն, այլ՝ յիշեցում, որ երախտաւորները արժանի են յարգանքի եւ պատուի:

ԿՈՐԻԻՆ ԱԲՂ. ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ